

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/2

21 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց քաղաքացի Հենրիկ Միրզոյանի 21.09.2014թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 21.03.2014 թ-ի թիվ 1338 որոշման դեմ:

Քաղաքացի Հենրիկ Միրզոյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչության պետը 21.03.2014 թ-ին կայացրել է որոշում հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին, որով որոշվել է Հենրիկ Միրզոյանից գանձել 120.626 դրամ, որից սոցիալական ապահովության վճարի գծով՝ 67.182 դրամ /առաջացել է 2010-2011 թ.թ. ամիսների գումարներից/, հաստատագրված վճարի գծով՝ 53.444 դրամ /առաջացել է 2008 թ-ի 7-ից 2011 թ-ի 3-րդ ամիսների գումարներից/:

Հենրիկ Միրզոյանը գտնում է, որ նշված վարչական ակտով իր վրա դրվել է ոչ իրավաչափ պարտականություն, ընդունվել է օրենքի խախտմամբ, հետևաբար, դրա հիման վրա չի կարող գանձվել դրանով նախատեսված գումարը:

1. Ա/Ձ Հենրիկ Միրզոյանը հաշվառումից հանվել է տարիներ առաջ՝ մինչև 2008 թ-ը, ընդ որում, մինչև իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցում կատարելը հաշվառումից դուրս գալու մասին տեղեկացվել է նաև համապատասխան հարկային մարմինը: Այնինչ, սույն վարչական ակտում նշված է, որ վճարում պետք է կատարվի 2008-2011 թ.թ. ընկած ժամանակահատվածի համար, այն դեպքում, երբ Ա/Ձ-ն իր գործունեությունը դադարեցրել է, հաշվառումից դուրս է եկել և այդ մասին պատշաճ կերպով տեղեկացրել է հարկային մարմին: Հետևապես, չի կարող խոսք լինել հաշվառումից դուրս գալուն հաջորդող ժամանակահատվածի համար հարկային և այլ վճարումներ կատարելու մասին:

2. Չնայած վերը նշվածին, ամեն դեպքում հարկ է նշել, որ այդ ժամանակահատվածում գործունեություն ծավալած լինելու դեպքում նշված վարչական ակտով ոչ իրավաչափ պարտականություն է դրվել գանգատաբերի վրա: Մասնավորապես, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 31.1-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո, բացառությամբ «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված դեպքերի:

ՀՀ վճարեկ դատարանն իր նախադեպային որոշումներում արձանագրել է, որ խախտման հայտնաբերման պահ է դիտվում անձին այդ մասին ծանուցելու պահը: Տվյալ դեպքում ծանուցումը և վարչական ակտը ուղարկվել են 2014 թ-ի ապրիլ ամսին, ինչը նշանակում է, որ խախտման հայտնաբերման պահը 2014 թ-ի ապրիլ ամսին է, և հարկային պարտավորություն կարող է առաջանալ դրան նախորդող երեք տարիների համար՝ մինչև 2011 թ-ի ապրիլ ամսին ընկած ժամանակահատվածի համար: Իսկ վարչական ակտով որոշվել է գանձել գումար 2008 թ-ից մինչև 2011 թ-ի մարտ ամսին ընկած ժամանակահատվածի համար:

Հարկ է նշել նաև, որ չեն պահպանվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ նաև Օրենք/ 38-րդ, 55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածների պահանջները:

3. Վարչական մարմինը, խախտելով Օրենքի 38-րդ հոդվածը, հնարավորություն չի ընձեռել վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ կարծիք

հայտնելու: Մասնավորապես, վարչական մարմինը, 21.03.2014 թ-ին քննարկելով վարչական վարույթի նյութերը, կայացրել է որոշում, իսկ իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակել է 09.04.2014 թ-ը և ծանուցել է միայն 2014 թ-ի ապրիլ ամսվա սկզբին:

4. Վարչական ակտում չեն պահպանվել նաև Օրենքով վարչական ակտին ներկայացվող պահանջները, մասնավորապես, ակտը որոշակի, հստակ և հասկանալի չէ, նշված է միայն, թե ինչի գծով է հաշվարկվել, սակայն անգամ հստակ ժամանակահատվածը նշված չէ: Բացի այդ, ակտը հիմնավորված չէ, չեն մատնանշվել նման որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իավական հիմքերը: Չի նշվում, թե արդյոք անհատ ձեռնարկատերը գործունեություն իրականացրել է, թե ոչ, ինչ կարգով և ժամկետներում պետք է վճարումները կատարվեին, կոնկրետ որ ժամանակահատվածի համար է հաշվարկվել գումարը:

Այսպիսով, վերը նշվածը հիմք ընդունելով կարելի է արձանագրել, որ 21.03.2014 թ-ի թիվ 1338 որոշումը կազմվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 31.1-րդ հոդվածի 1-ին պարբերության, Օրենքի 38-րդ, 55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածների պահանջների խախտմամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 63-րդ, 69-րդ, 70-րդ, 77-րդ հոդվածներով գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել Շենգավիթի ՀՏ պետի 21.03.2014 թ-ի թիվ 1338 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետը, քննարկելով Հենրիկ Միրզոյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 21.03.2014 թ-ին ընդունել է թիվ 1338 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 21.03.2014 թ-ի դրությամբ Հենրիկ Միրզոյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 120.626 դրամ:

Նշվեց նաև, որ ըստ հարկային գործում առկա տվյալների, Ա/Ձ Հենրիկ Միրզոյանը գործունեությունը ժամանակավորապես դադարեցրել է 20.06.2007 թ-ից վերսկսել է 03.06.2008 թ-ին: Այնուհետև գործնեությունը ժամանակավորապես կրկին դադարեցրել է 08.07.2008 թ-ից ու վերսկսել 02.07.2010 թ-ին:

Ա/Ձ Հենրիկ Միրզոյանը գործունեությունը դադարեցրել է (լուծարվել է) 15.03.2011 թ-ին:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորությունը կազմում է 67.182 դրամ, որն առաջացել է 2008 թ-ի հունիսից մինչև 2011 թ-ի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված նվազագույն սոցիալական ապահովության վճարի գումարներից և դրանք սահմանված ժամկետում չվճարելու համար սահմանված կարգով հաշվարկված տույժերից:

Հաստատագրված վճարի գծով պարտավորությունը կազմում է ընդամենը 53.444 դրամ, որից ապառք՝ 33.368 դրամ, տույժ 20.076 դրամ: Ապառքն առաջադրվել է 2010 թ-ի նոյեմբերից 2011 թ-ի մարտ ամիսների համար հաստատագրած վճարի գծով հարկային տեսչություն ներկայացված հայտարարությունների հիման վրա:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ Որոշման համաձայն պարտավորություններն առաջացել են 2008-2011 թ.թ.-ին, այն դեպքում, երբ այդ ժամանակահատվածում Ա/Ձ-ն գործունեությունը դադարեցրել է և այդ մասին տեղեկացրել է հարկային մարմին, նշվեց հետևյալը:

ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ ներկայացուցիչը նշեց, որ Ա/Ձ Հենրիկ Միրզոյանի կողմից 14.07.2010 թ-ին ստորագրվել է լիազորագիր, որով վերջինս լիազորել է «Ռ.Մ և Քոմֆանի» ՍՊԸ-ին, ի դեմս տնօրեն Գևորգ Դոստոյանի և փոխտնօրեն Տիգրան Հովհաննիսյանի, իր իրավունքները և օրինական շահերը ներկայացնել պետական և տեղական

ինքնակառավարման մարմիններում: Այնուհետև Ա/Ձ Հենրիկ Միրզոյանի անունից հարկային տեսչություն են ներկայացվել 2010 թ-ի սեպտեմբեր, հոկտեմբեր-նոյեմբեր-դեկտեմբեր, 2011թ-ի հունվար-փետրվար-մարտ ամիսների ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների մասին հայտարարություններ:

Քննարկվող դեպքում հաստատագրված վճարի գծով պարտավորություններ հաշվարկելու համար հիմք են ընդունվել վերոգրյալ հայտարարություններում արտացոլված տվյալները:

Վերոգրյալից հետևում է, որ գանգատաբերի կողմից բերված պնդումներն՝ իր կողմից 2008-2011 թ.թ.-ին գործունեություն չիրականացնելու վերաբերյալ, ըստ էության, հիմնավոր չեն:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդմանը, որ տվյալ դեպքում կիրառելի են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 31.1-րդ հոդվածի դրույթները, որի հետևանքով լրացուցիչ պարտավորություններ չեն կարող առաջադրվել, նշվեց հետևյալը:

Նախ պետք է նշել, որ գանգատում մեջբերված իրավանորմը սահմանված է ոչ թե «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 31.1-րդ, այլ՝ 30.1-րդ հոդվածով: Բացի այդ, Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում հիշատակված հոդվածի դրույթները կիրառելի չեն, քանի որ Որոշմամբ հաստատագրված վճարի գծով պարտավորություններն առաջադրվել են հիմք ընդունելով հաստատագրված վճարի գծով ներկայացված հաշվետվություններում արտացոլված տվյալները, իսկ պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով՝ հիմք ընդունելով «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները: Հետևապես, այդ պարտավորությունները հարկային մարմնին հայտնի են դարձել ոչ թե Որոշումը կայացնելիս, այլ՝ դրանք առաջանալու առաջին իսկ օրվանից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի դրույթներով Շենգավիթի ՀՏ պետը, ուսումնասիրելով Հենրիկ Միրզոյանի վերաբերյալ հարկային մարնում առկա նյութերն ու ապացույցները, 21.03.2014 թ-ին ընդունել է թիվ 1338 որոշումը, որը Հանձնաժողովի համոզմամբ իրավաչափ է և ենթակա է կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 21.03.2014 թ-ի թիվ 1338 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

